2022, № 1, 9-22 *Միջազգային հարաբերություններ*
https://doi.org/10.46991/BYSU:D/2022.13.1.009

ԱՐՑԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ *

ԱԼԵՆ ՂԵՎՈՆԴՅԱՆ

2020 թ. 44-օրյա պատերազմը էականորեն փոխեց Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական դերակատարությունը: Եթե նախկինում տարածաշրջանում կար որոշակի հստակ ձևավորված ուժային հավասարակշռություն, ապա պատերազմից հետո այն խախտվեց, իսկ նորը մինչ օրս դեռևս չի ձևավորվել: Հոդվածում դիտարկվում և վերլուծվում է տարածաշրջանի աշխարհաքաղաքական դերակատարման ու այնտեղ ուժային հավասարակշռության հաստատման վրա ազդող գործոնների համակարգը, մասնավորապես՝ տարածաշրջանում հակամարտությունների, Հարավային Կովկասի էներգետիկ-հաղորդակցային դերի, այդ երկրներում իշխանության փոփոխման ուղիների, նրանց ընտրած արտաքին քաղաքական դոկտրինների ցուցիչների ողջ համախումբը, ինչպես նաև ՌԴ-ի ու Թուրքիայի փոխակերպված հարաբերությունների իրողությունները:

Բանալի բառեր - *Հարավային Կովկաս, 44-օրյա պատերազմ, ուժային հավասարակշռություն, աշխարհաքաղաքական դերակատարում, ՌԴ, Թուրքիա, ԼՂ*

2020 թ. արցախյան 44-օրյա պատերազմը փոփոխեց ուժային հավասարակշռությունը Հարավային Կովկասում (այսուհետ՝ Հվ. Կովկաս): Դա մի կողմից նախկինում ձևավորված ուժային հավասարակշռության խախտման հետևանք էր, մյուս կողմից՝ նորի ձևավորման նախապայման: Տարածաշրջանը հայտնվեց ուժային դիրքավորման նոր փուլում, որտեղ Հվ. Կովկասի աշխարհաքաղաքական կշիռը պայմանավորվեց մի կողմից ռուս-թուրքական տարածաշրջանային մրցակցության հարաճուն գործընթացի սրմամբ, մյուս կողմից՝ Արևմուտք-ՌԴ բևեռային մրցապայքարի ու հակադրության խորացմամբ: Այսօր դեռևս վերջնականապես չձևավորված տարածաշրջանային ուժային հավասարակշռության ստատուս քվոյի պայմաններում ստեղծվել է մի վիճակ, երբ այն կազմող միջազգային ճանաչում ստացած երկրների անվտանգության ու զարգացման շահերը անորոշության, նոր գործընկեր-դերակատարներ փնտրելու, նոր աշխարհաքաղաքական ինքնություն ձևավորելու, գոյապահպանման խնդիրներ լուծելու տիրույթում

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-5F218 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

են։ Ուստի հարկ ենք համարում աշխարհաքաղաքական ակտիվ փոփոխությունների համատեքստում դիտարկել տարածաշրջանային իրողությունները, որոնք ՀՀ անվտանգության առաջնահերթություններից են և պայմանավորում են նրա գոյության ու զարգացման ռիսկերն ու հնարավորությունները։

44-օրյա պատերազմը, որ տարածաշրջանային ուժային հավասարակշռության խախտում էր, համաշխարհային ներկա փոխակերպումների համատեքստում նաև նոր աշխարհակարգի ձևավորման տեղային դրսևորում էր. աշխարհակարգը համաշխարհային ու լեգիտիմ ուժային հավասարակշռություն է և կազմված է երկրագնդի տարբեր տարածաշրջաններում (այդ թվում՝ Հվ. Կովկասում) տեղային ուժային հավասարակշռություններից, քաղաքական ու տնտեսական խաղի կանոնների, միջպետական մրցակցային կարգերի հաստատումից։

Նշենք, որ ուժային հավասարակշռության խախտման գործընթացը չի պայմանավորվում միայն ռազմական բաղադրիչով։ Այն նաև ոչ ռազմական բնույթի մի խումբ գործոնների ազդեցությունն իր վրա կրող բազմամակարդակ համակարգ է, որը պայմանավորում է նաև աշխարհաքաղաքական ու ռազմավարական գործընթացների բնույթը։ Այս առումով ՀՀ անվտանգային շահերը անմիջականորեն կախված են հարավկովկասյան տարածաշրջանում ուժային հարաբերակցության բնույթից ու աշխարհաքաղաքական նոր դերակատարում ստանձնելու իրողություններից։

Նշենք, որ որևէ տարածաշրջանի աշխարհաքաղաքական կշիռն ու այնտեղ ուժային հարաբերակցության բնույթը պայմանավորում են մի շարք ցուցիչներ, որոնց թվում առաջնային են տվյալ տարածաշրջանում առկա ու պոտենցիալ հակամարտությունների շրջանակները, տարածաշրջանի էներգետիկ ու հաղորդակցային հնարավորությունները, էթնիկ-ազգային կազմը, հարևան երկրների ռազմաքաղաքական-անվտանգային հարաբերությունները տարածաշրջանային և համաշխարհային ուժային կենտրոնների հետ, տնտեսական ներուժը և դրա կառուցվածքը, էլիտաների լեգիտիմության աստիճանը և քաղաքական փոխակերպումների բնույթը։

2020 թ. սեպտեմբերի 27-ից հետո Հվ. Կովկասում հակամարտությունների ակտիվության ու պասիվության նկարագիրը միանշանակ չէ։ Եթե նախկինում՝ մինչև 2008 թ. օգոստոսը, Աբխազիան և Հարավային Օսիան չճանաչված կամ ինքնահռչակ իրավաքաղաքական միավորներ էին, ապա 2008-ի ռուս-վրացական պատերազմից հետո ՌԴ-ն ճանաչեց նրանց անկախությունը, իսկ հետագայում՝ նաև Վենեսուելան, Նիկարագուան, Սիրիան*։ Դրանից հետո այդ քաղաքաիրավական

* Որոշ երկրներ, օրինակ՝ Վանուատուն, Տուվալուն, 2014 թ. ճանաչեցին Աբխազիայի ու Հարավային Օսիայի անկախությունը, սակայն հետագայում հրաժարվեցին իրենց իրավական ակտերից։

միավորների դերն ու նշանակությունը փոխվեցին և նրանք, էթնոքաղաքական հակամարտության նախկին կարգավիճակից դուրս գալով, ստացան քաղաքական ու անվտանգային նոր որակի վարք դրսևորելու հնարավորություն, կարգավիճակ։ Իհարկե, ռազմաքաղաքական ու ռազմատեխնիկական ներուժ ունենալու դեպքում Վրաստանը ինչ-որ մի օր գուցե կփորձի նրանց վերադարձնել իր ինքնիշխանության գոտի, սակայն այս պահին այդ միավորների ապագան առավելապես ՌԴ-Արևմուտք օրակարգի հարց է։

ԼՂ-ն ավանդաբար եղել է Հվ. Կովկասի ամենից ակտիվ համակարտությունը. հենց միայն հրադադարի ժամանակ շփման գծում զոհերի թիվը դրա վառ վկայությունն է։ 1994-ի հրադադարից մինչ 2020 թ. հայկական կողմն ունեցել է 2000-ից ավելի զոհ[1]։ 1994-ի հրադադարից հետո 2008 թ. շփման գծում լարվածություն սրման մեկնարկի տարի էր, որը արձանագրեց. համակարտությունը կայուն ակտիվության փուլ է մտել, իսկ 2016-ին արդեն տեղի ունեցավ 4-օրյա պատերազմը, որը մի շարք մասնագետների կողմից որակվեց որպես գալիք մեծածավալ պատերազմի նախավարժանք։ 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը արցախա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով անցավ հարձակման։ 44 օր տևած ակտիվ մարտերից հետո ՀՀ քաղաքական ղեկավարությունը նոյեմբերի 9-ին ստորագրեց կապիտուլյացիոն հայտարարություն։ Այդ պատերազմի հետևանքով էականորեն ու հիմնավորապես փոխվեց ուժային հարբերակցությունը ԼՂ հակամարտության գոտում, բայց խնդիրը բնականաբար չլուծվեց։ Արցախի՝ չկորսված հողերի վրա տեղակայվեցին ռուսական խաղաղապահ ուժեր, որոնք ստեղծված իրավիճակում արցախահայության ֆիզիկական անվտանգության միակ երաշխավորն են։ Արցախի՝ Խորհրդային Միության քարտեզներով ԼՂԻՄ տարածքից դուրս գտնվող հողերը, որոնք ազատագրվել էին Արցախյան առաջին պատերազմի ժամանակ (Քարվաճառ, Ակնա և այլն), հայկական կողմը հանձնեց Ադրբեջանին։

Բացի վերոնշյալներից՝ տարածաշրջանում լարվածության ու կոնֆլիկտածին այլ օջախներ ևս կան. մասնավորապես՝ հայաբնակ Ջավախքը[2], որը Վրաստանը ու Թուրքիա-Ադրբեջանը ավանդաբար համարում են անջատողականության ներուժ ունեցող հայաբնակ տարածաշրջան. այդ պատճառով Վրաստանի իշխանությունները թուրք-ադրբեջանական իշխանությունների օժանդակությամբ այստեղ հայերի մշակութային ուծացման քայլեր են ձեռնարկում։

---

[1] Տե՛ս «Հայկական բանակի զոհերը (մարտական և ոչ մարտական) 1994-ի մայիսյան զինադադարից ի վեր», February 15, 2020, http://www.aniarc.am/2020/02/15/about-2000-victims-since-1994-2020/

[2] Ջավախքում բնակվում է Վրաստանի՝ մոտ 114 հազ. հայազգի քաղաքացի (տե՛ս «Маленькая Армения» в Грузии, или что представляет из себя Самцхе-Джавахетия? https://iwpr.net/ru/global-voices/malenkaya-armeniya-v-gruzii-ili-chto-predstavlyaet-iz-sebya-samckhe-dzhavakhetiya):

Հվ. Կովկասում պոտենցիալ կոնֆլիկտածին են Վրաստանի հարավային ու հարավ-արևելյան հատվածները, որոնք խիտ բնակեցված են էթնիկ ադրբեջանցիներով: Նրանք թեև դեռևս ակնհայտ քաղաքական հավակնությունների մասին հրապարակային չեն հայտարարում, սակայն դրա բոլոր հիմքերը կան: 2014 թ. տվյալներով Վրաստանում բնակվում է մոտ 300 հազ. ադրբեջանցի[3]: Հիշեցնենք, որ հենց այդ տարածքով են անցնում ՀՀ մտնող գազամուղը, ինչպես նաև ՀՀ-Վրաստան ավտոմոբիլային ճանապարհը և երկաթուղին:

Հվ. Կովկասի ներքին հակամարտողականության ցուցիչը ավանդաբար պայմանավորել է տարածաշրջանում արտաքին դերակատարների, ուժային բևեռների քաղաքական մոտեցումները և նրանց աշխարհաքաղաքական դիրքավորումը: Եթե նախկինում հակամարտություններն էին պատճառը, որ ուժային բևեռները մասնակցեն տարածաշրջանային զարգացումներին, ապա նոր իրավիճակը՝ ՀՀ-ում 2018-ի քաղաքական փոփոխությունը և հատկապես 2020-ի 44-օրյա պատերազմը, էապես փոխեց ձևավորված ուժային պատկերը: Օրինակ՝ պատերազմը նպաստեց Թուրքիայի ու ՌԴ-ի տարածաշրջանային դերակատարման շեշտակի աճին ու սուր մրցակցությանը: Հիշեցնենք, որ նախկինում Անկարան Հվ. Կովկասի քաղաքական սահմաններից դուրս էր «աշխատում» Ադրբեջանի հետ ու այդ կերպ էր փորձում ազդել ներտարածաշրջանային գործընթացների վրա: Նոր պայմաններում նրա ազդեցության շեշտակի աճը Ադրբեջանում նպաստեց, որ Ադրբեջան-Թուրքիա հարաբերություններում Բաքվի կախվածությունը Անկարայից էականորեն մեծանա, ինչը, բնականաբար, ինչ-որ մի փուլում խնդրահարույց վիճակ է ստեղծելու Ի. Ալիևի և Մոսկվայի միջև: Եթե նախկինում ՌԴ-ն ՀՀ-ի ու Ադրբեջանի հետ աշխատում էր երկկողմ ձևաչափով, իսկ հակամարտության հարցում ԵԱՀԿ Մինսկի խմբում որոշակի լեգիտիմ առաջատար դիրք ուներ, ապա այժմ ռազմաքաղաքական իր ազդեցությունը հաստատեց Ադրբեջանում խաղաղապահների միջոցով և դարձավ հակամարտության՝ ներկայումս որակապես նոր փուլի ու տարածաշրջանային կայունության ապահովման հիմնական երաշխավոր-մոդերատորը: Եթե մինչ պատերազմը տարածաշրջանային ու արտատարածաշրջանային մի շարք ուժերի հետին նպատակը ՀՀ-ում և տարածաշրջանում առհասարակ ՌԴ-ի դերի ու նշանակության թուլացումն էր և տեղական ու համաշխարհային այլ ուժային կենտրոններով նրան փոխարինելը, ապա աշխարհաքաղաքական նոր իրողությունները փաստում են, որ ՌԴ-ի ազդեցությունը ինչպես բուն Հվ. Կովկասում, այնպես էլ ՀՀ-ում և Ադրբեջանում ավելացել է:

Տարածաշրջանում աշխարհաքաղաքական միջավայրի փոփոխման ու նրա դերակատարության ձևակերպման կարևորագույն բաղադրիչ են այդ երկրներում քաղաքական-պետական էլիտաների ձևավոր-

[3] Տե՛ս Этнический состав населения Грузии по данным всеобщих переписей http://www.demoscope.ru/ weekly/ 2017/0723/comments/comm3.html

ման, իշխանափոխության ու նոր իշխանությունների քաղաքական առաջնահերթությունները հստակեցնելու, հնարավոր փոխակերպումները արձանագրելու ցուցիչները: Հվ. Կովկասի երկու երկրներում՝ Վրաստանում (2003 թ.) և ՀՀ-ում (2018 թ.), տեղի ունեցան փողոցի միջոցով իշխանափոխություններ, որոնք ընդունված է բնորոշել հեղափոխություններ: Ի տարբերություն այս երկու երկրների՝ Ի. Ալիևի վարչակազմը Ադրբեջանում անփոփոխ է մնացել 2003-ից, որի ընթացքում նա որոշակի պարբերականությամբ «քաղաքական մաքրումներ» է կատարել կառավարման հիերարխիայի ամենատարբեր օղակներում. քրեական գործեր են հարուցվել տարբեր անձանց, այդ թվում՝ ԳՇ պետի, ԱԱԾ ղեկավարի, բազմաթիվ այլ պաշտոնյաների և նախարարների նկատմամբ:

Հարկ է նշել, որ պետական էլիտաների ձևավորման ու նրանց կողմից պետական կառավարման, արտաքին քաղաքականության ուղեգծի բնույթը նույնպես կարևոր ցուցիչ է՝ բացահայտելու ու գնահատելու տարածաշրջանային երկրների աշխարհաքաղաքական դերն ու նրանց փոխակերպումները: Վրաստանում 2003 թ.-ի վարդերի հեղափոխությունից հետո Մ. Սահակաշվիլին որդեգրեց ընդգծված հակառուսական ուղեգիծ. հակառուսականությունը համարվեց ինքնիշխան Վրաստանի քաղաքական ու գոյաբանական միակ հենքը, իսկ ՌԴ-ն պիտակավորվեց երկրի բոլոր խնդիրների հիմնական և միակ աղբյուր: Վրաստանում իրավիճակը փոխվեց, երբ Մ. Սահակաշվիլին պարտվեց 2012 թ. պառլամենտական ընտրություններում, և իշխանության եկավ Բ. Իվանաշվիլու «Վրացական երազանք» կուսակցությունը, որի կառավարման ու նրան հաջորդած շրջանում ռուս-վրացական հարաբերությունները դանդաղորեն փոխակերպվեցին, ու որոշակի դրական դինամիկա նկատվեց Մ. Սահակաշվիլու թիմի կառավարման տարիների համեմատ:

2018-ին ՀՀ-ում տեղի ունեցավ պետական կառավարման էլիտայի փոփոխություն. իշխանության եկած քաղաքական թիմի անդամների մի զգալի մասը քաղաքական ու հանրային կյանքի կազմակերպման նախորդ ժամանակաշրջանում աչքի էր ընկնում առավելապես արևմտյան արժեքային կողմնորոշմամբ ու Արևմուտքի հետ քաղաքական հարաբերությունների խորացման մոտեցումներով, ինչը քաղաքական ու պետական կառավարման անհրաժեշտ փորձի բացակայության հետևանք էր: Հետագայում հասկացան, որ մեզ նման փոքր պետության դեպքում արտաքին քաղաքական կողմնորոշման ուղեգծի կտրուկ փոփոխությունները վտանգավոր հետևանքներ կարող են ունենալ, և ՀՀ-ի մոտեցումներում ռեալպոլիտիկով և տարածաշրջանային ուժային սրբագրումներ մտցրին: Մշակվեց ու 2020 թ. ընդունվեց ՀՀ ազգային անվտանգության նոր հայեցակարգը, որտեղ արտացոլվեցին կառավարման էլիտայի նոր պատկերացումները մեր երկրի աշխարհաքաղաքական տեղի ու դերի վերաբերյալ[4]: Արցախյան 44-օրյա պատերազ-

[4] Տե՛ս Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, https://www.gov.am/am/National-Security-Strategy/

մը էական փոփոխություններ մտցրեց ՀՀ աշխարհաքաղաքական հայեցակարգում։ Երկրի դերակատարության էական նվազումը և ազդեցության ցուցիչների թուլացումը պատճառ դարձան, որ հիմք ընդունելով Հվ. Կովկասում ձևավորված ուժային հարաբերակցության իրական պատկերը՝ հայ-ռուսական հարաբերությունները խորացվեն։ Միաժամանակ ՀՀ-ն «խաղաղության դարաշրջան» ձևավորելու թեզի ներքո հայտարարեց տարածաշրջանի հիմնական սպառնալիքների՝ Ադրբեջանի ու Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու իր անբեկանելի կամքի մասին։ Սա մի կողմից ի ցույց էր դնում գործող պետական կառավարման քաղաքական պատկերացումների ու արժեքային կողմնորոշումների միջակայքը, մյուս կողմից՝ Ադրբեջանի հետ կնքված կապիտուլյացիոն հայտարարության հետեվանք էր։

Ի տարբերություն ՀՀ-ի և Վրաստանի՝ Ադրբեջանի արտաքին քաղաքական ուղեգծի հիմքում ընկած են ավանդական ելակետային մի քանի հանգամանքներ՝ էներգետիկ և հաղորդակցային դերակատարությունը, համաթուրքականության քաղաքակրթական պատկանելությունը ու այն քաղաքական նպատակով մակրոտարածաշրջանային ներգրավումը և ռազմավարական գործակցությունը ՌԴ-ի հետ։ Այս երեք իրողություններն իրար է սոսնձում Ի. Ալիևի ռեժիմի անփոխարինելիության թեզը, որի համատեքստում Ադրբեջանը տարբեր մակարդակներում փորձում է հավասարակշռության ու հակակշռման քաղաքականություն վարել. դրա ամենաթարմ դրսևորումը 2021 թ. հունվարի 15-ին Թուրքիայի հետ կնքված Շուշիի հռչակագիրն է, որը տարածաշրջանային մակարդակում բալանսավորվեց 2022 թ. փետրվարի 22-ին Ադրբեջանի ու ՌԴ-ի միջև ստորագրված «Դաշնակցային փոխգործակցության հռչակագրով»։

Հվ. Կովկասում աշխարհաքաղաքական փոխակերպումների էական ու առանցքային բաղադրիչը տարիներ շարունակ եղել է տարածաշրջանի երկրների էներգետիկ ու հաղորդակցային ներուժը, որի թեմատիկան էլ ավելի կենսական դարձավ 44-օրյա պատերազմից հետո, երբ ստորագրված հռչակագրում անգամ նշվեց «տարածաշրջանում հայ և ադրբեջանական կողմերում առկա հաղորդակցային ուղիների ապաշրջափակման կարևորության ու կողմերի հանձնառության մասին»[5]։

Տարիներ ու տասնամյակներ շարունակ Հվ. Կովկասի և հատկապես Ադրբեջանի աշխարհաքաղաքական կշիռը որոշվում է էներգետիկ ու հաղորդակցային այլընտրանք լինելու հանգամանքով։ Մասնավորապես եվրոպական մի շարք պետություններ (Իտալիա, Ավստրիա, Սլովենիա, Գերմանիա և այլն), որոնք կենսական կախվածություն ունեն ռուսական գազից, պարբերաբար փնտրել են գազի այլընտրանքային աղբյուրներ՝ թուլացնելու իրենց էներգետիկ կախվածությունը ռու-

[5] Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации, 10 ноября 2020 года, http://kremlin.ru/events/president/news/64384

սական «գազային քաղաքականությունից»։ Հվ. Կովկասում և հատկապես Կասպից ծովում նավթի ու գազի նոր հանքավայրերի հայտնաբերումը, որ տեղի ունեցավ 20-րդ դարի 90-ականներին և 2000-ականների սկզբներին, եվրոպացիների մեջ հույս արթնացրեց, որ միգուցե ադրբեջանական (Ղազախստանի ու Թուրքմենստանի էներգետիկ ու հատկապես գազային ռեսուրսների հետ մեկտեղման դեպքում) էներգետիկ ներուժը հնարավորություն կընձեռի գտնել ռուսական գազին այլընտրանքային աղբյուր։ Որպես տարանցիկ երկրներ դիտարկվում էին Վրաստանը, որը արևմտյան քաղաքակրթական ու քաղաքական ազդեցության ներքո էր, և Թուրքիան, որը մի կողմից՝ իր կարիքների համար էր սպառում ադրբեջանական էներգետիկ ռեսուրսները, մյուս կողմից՝ ձեռք էր բերում էներգետիկ հաղորդակցային կարևոր դեր Եվրոպային գազ ու նավթ մատակարարելու հարցում։ Սա Թուրքիայի համար կարևոր էր, քանի որ օրակարգային էր Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցության հարցը։ Էներգետիկ դերի ու նշանակության տեսանկյունից տարածաշրջանի առաջին պետությունը, իհարկե, Ադրբեջանն է, որը Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցումից ու Կասպից ծովում գազի նոր պաշարներ հայտնաբերելուց հետո էականորեն ավելացրել է իր նկատմամբ հետաքրքրությունը ինչպես տարածաշրջանում, այնպես էլ մակրոտարածաշրջանային և համաշխարհային գործընթացների համատեքստում։ Որպեսզի պարզ լինի էներգետիկ ռեսուրսների տեղն ու դերը Ադրբեջանի տնտեսության ու կարողությունների ամրապնդման գործում, փաստենք, որ Ադրբեջանի եկամուտները «1994-ի դարի նավթային գործարքի» կնքումից հետո 2001-2021 թթ. եղել է 150 մլրդ դոլար[6]։ Բաքվում կանխատեսում են, որ 2022 թ. հանքերի շահագործումը կբերի ևս 5 մլրդ դոլար։ Իհարկե այստեղ կան մի շարք ռիսկեր, սակայն աշխարհում նավթի գների տատանումների դեպքում մեկ բարելի դիմաց 70-80 դոլարը շահեկան է Ադրբեջանի համար, քանի որ Բաքուն իր բյուջեն պլանավորում է մեկ բարելի համար 40 դոլարով։ Միաժամանակ նշենք, որ իրավիճակը Ադրբեջանի գազի արտահանման մասնաբաժնում այնքան էլ ոգևորիչ չէ։ Այստեղ Ադրբեջանը կորուստներ է արձանագրում իր հիմնական գնորդի՝ Թուրքիայի պատճառով, որը գնում է նաև ռուսական գազ. 2018-2019 թթ. Թուրքիայում գազի սպառման ծավալների կտրուկ ավելանալու պատճառով, սկսած 2020-ից, Ադրբեջանը իր դիրքերը թուրքական շուկայում աստիճանաբար զիջում է ՌԴ-ին։ 2021-ի վերջին 9 ամիսների ընթացքում «Գազպրոմը» Թուրքիա է արտահանել 20,3 մլրդ մ^3 գազ, որը 15,3%-ով ավելի էր նախորդ տարվա համեմատ[7]։ Միաժամանակ նշենք, որ Ադրբեջանից Թուրքիա գազի մատակարարումները կրճատվել են 20%-ով, և այդ

[6] Տե՛ս **Ваге Давтян,** Энергетика Армении, Азербайджана и Грузии: Прогноз на 2022 год https://eurasia.expert/ energetika-armenii-azerbaydzhana-i-gruzii-prognoz-na-2022/

[7] Տե՛ս նույն տեղը։

միտումը, կանխատեսումների համաձայն, շարունակվելու է:

Ինչ վերաբերում է գազի եվրոպական շուկային, ապա Ադրբեջանը այստեղ լավագույն դեպքում կկարողանա մատակարարել գազի անհրաժեշտ ծավալի 2-2,5 %-ը, և դա հնարավոր է Եվրոպայում գազի սպառման ծավալների ավելացման ու Անդրանատոլիական (TANAP) և Անդրադրիատիկ (TAP) գազամուղների հնարավոր թողունակության դեպքում: Այդ է նաև պատճառը, որ ԵՄ-ն ամեն ջանք գործադրում է՝ Թուրքմենստանը Եվրոպական հարավային գազային հոսքին միանա Անդրկասպյան գազամուղի հնարավոր գործարկման դեպքում (տե՛ս քարտեզ 1)[8]:

Քարտեզ 1



Հվ. Կովկասով էներգետիկ արտահանման այս ծրագրերը փաստորեն ողջ տարածաշրջանը ՌԴ-ից կտրելու նպատակ են հետապնդում: Այս համատեքստում ինչպես հավաքական Արևմուտքի, այնպես էլ Թուրքիայի շահերը լայն առումով համընկնում են, սակայն մարտավարական ու ազդեցության գոտիների սահմանման և որոշակիացման առումով դրանք միշտ չէ, որ նույնական են: Թուրքիան, որ արդեն վաղուց իրեն աշխարհաքաղաքական անկախ սուբյեկտ է համարում և լինելով ՆԱՏՕ-ի անդամ՝ երբեմն շատ սուր հակասություններ է ունենում դաշինքի այլ ազդեցիկ անդամների հետ, հաճախ իր քայլերը պայմանավորում է բացառապես իր ազգային շահերով: Նա իր այդ գործելաոճը հաջողությամբ կարողանում է կիրառել ինչպես տարածաշրջանային լայնածավալ գործընթացներում՝ սկսած Ուկրաինայից մինչ Հվ. Կովկաս ու Միջին Ասիա, այնպես էլ ՌԴ-ի հետ իր երկկողմ շփումներում՝ մի ձեռքով գործակցելով, մյուսով՝ մրցակցելով ու հակադրվելով ՌԴ-ին: Այս առումով հիշատակման արժանի է Ռ. Թ. Էրդողանի՝ սեփական երկրի քաղաքական ազդեցության ավելացման նպատակով «անկայունության գոտիներ» ստեղծելու ռազմավարությունը, որով նա խնդրահարույց օջախներ, իրավիճակներ է ստեղծում աշխարհի տարբեր հատվածներում և հատկապես ՌԴ-ին սահմանակից երկրներում,

[8] Տե՛ս Caspian Policy Center (CPC), https://twitter.com/caspiancenter/status/1255593675008151553

այնուհետև այդ իրավիճակները հարթեցնելուն ուղղված նախաձեռնություններով հանդես գալիս՝ դրանով ավելացնելով իր դերն ու նշանակությունը՝ նոր որակի կարգավիճակ ստանձնելով ինչպես իրեն մրցակից, այնպես էլ դաշնակից երկրների համար։

Վերադառնալով տարածաշրջանի աշխարհաքաղաքական դերակատարման փոխակերպման իրողություններին՝ հարկ է նշել, որ 44-օրյա պատերազմից հետո տարածաշրջանում հաղորդակցային ուղիների ապաշրջափակման պայմանավորվածության համատեքստում ակնհայտ է, որ դա անդրադառնալու է ողջ տարածաշրջանի վրա։ Հաղորդակցային նոր կլիմայի պայմաններում է՛լ ավելի կհստակեցվեն տարածաշրջանի պետությունների աշխարհաքաղաքական կշիռն ու ընդլայնման ծավալները։ Պարզ է, որ առավել շահեկան վիճակում կհայտնվեն այն երկրները (օրինակ՝ Ադրբեջանը, Թուրքիան), որոնք, ի տարբերություն ՀՀ-ի, ունեն տնտեսական առավել մեծ կարողություններ ու ֆինանսական ռեսուրսներ, շահեկան աշխարհագրություն։ Այս համատեքստում, կարծում ենք, նախ պետք է հատկապես դիտարկել տարածաշրջանի երկաթուղային ընդհանուր ցանցը (տե՛ս քարտեզ 2)՝ ինչպես գործող, այնպես էլ չգործող երկաթուղային ուղիների համակարգը, ապա նաև անդրադառնալ 2020 թ. նոյեմբերի 10-ի հայ-ադրբեջանական հայտարարությամբ նախատեսվող երկաթուղու կառուցման և ապաշրջափակման հանձնառություններին և քարտեզին (տե՛ս քարտեզ 3)։

Քարտեզ 2

Հարավային Կովկասում գործող և չգործող երկաթուղային ցանց [9]

[9] Տե՛ս **Ильгар Велизаде,** Разблокировка путей сообщения на Южном Кавказе пойдет на пользу всем, https://ccbs.news/ru/article/3423/

Քարտեզ 3

2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարությամբ նախատեսվող տարածաշրջանային հաղորդուղիների ապաշրջափակման քարտեզ[10]

Երկու քարտեզներից էլ ակնհայտ է դառնում, որ օբյեկտիվ ու սուբյեկտիվ մի շարք գործոններով պայմանավորված՝ ապաշրջափակումից ամենից շատ օգտվելու է Ադրբեջանը, որը բնականաբար կմեծացնի ինչպես տարածաշրջանային, այնպես էլ համաշխարհային գործընկերների հետաքրքրությունները նրա նկատմամբ, աշխարհաքաղաքական կշիռը, ազդեցության գործակիցը:

Տարածաշրջանում ռազմաքաղաքական ու ռազմատեխնիկական ուժային հարաբերակցությունը 2020 թ. 44-օրյա պատերազմի հետևանքով էականորեն փոփոխվեց: Եթե նախկինում ռազմատեխնիկական առումով կար հարձակողական ու դիմադրության որոշակի հավասարակշռություն, ապա այն հիմնովին փոխվեց ի վնաս ՀՀ-ի: Զինվորական ու քաղաքացիական բնակչության, ինչպես նաև կողմերի ռազմատեխնիկական միջոցների կորուստները ուժային նոր հարաբերակցություն ստեղծեցին տարածաշրջանում, որը սրբագրեց երկրների արտաքին քաղաքական տեսլականները, վարքը և դիրքավորումը: Կողմերի ռազմատեխնիկական կորուստների ընդհանուր պատկերը տե՛ս աղյուսակներ 1-ում և 2-ում:

[10] Տե՛ս Армения и Азербайджан очертили границы отношений, https://www/kommersant.ru/doc/4640957 12.01.2021

Աղյուսակ 1[11]

ՀՀ/ Արցախի Հանրապետություն	Ոչնչացված	Վնասված	Գրավված	Ընդհանուր
Տանկեր	146	6	103	255
Զրահապատ մարտական մեքենաներ	25	1	52	78
Հետևակի մարտական մեքենաներ	32	-	48	82
Ինքնագնաց հակատանկային հրթիռային համակարգեր	4	-	15	19
Քարշակվող հրետանի	138	10	102	250
Ինքնագնաց հրետանի	21	-	8	29
Հրետանու աջակցության մեքենաներ	1	-	2	3
Համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր	75	-	9	85
Բալիստիկ հրթիռային համակարգեր	2	-	-	2
Ականանետներ	9	-	50	59
Հակատանկային կառավարվող հրթիռային համակարգեր	3	-	146	149
ՀՕՊ շարժական համակարգեր	-	-	8	8
Զենիթահրթիռային շարժական համակարգեր	3	-	12	15
ՀՕՊ համակարգեր	34	-	5	39
Ռադիոլոկացիոն համակարգեր	14		4	18
Ռադարներ, էլեկտրոնային և ալիքային պայքարի միջոց – համակարգեր	3	-	-	3
Ինքնաթիռներ ու ուղղաթիռներ	-	2	-	2
Անօդաչու թռչող սարքեր	6	-	-	6
Բեռնատարներ, ամենագնացներ	331	18	387	737
Հակահրթիռային պաշտպանության համակարգեր	2	-	-	2

[11] Տե՛ս The Fight For Nagorno-Karabakh: Documenting Losses on the Sides of Armenia and Azerbaijan https://www.oryxspioenkop.com/2020/09/the-fight-for-nagorno-karabakh.html

Աղյուսակ 2[12]

Ադրբեջանի Հանրապետություն	Ոչնչացված	Վնասված	Գրավված	Լքված	Ընդհանուր
Տանկեր	38	16	7	1	62
Զրահապատ մարտական մեքենաներ	6	3	9	7	23
Հետևակի մարտական մեքենաներ	49	7	5	10	71
Համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր	1	1	-	-	2
Ականանետներ	-		1		1
Հակահրթիռային պաշտ-պանության համակարգեր	-	1	-	-	11
Ինքնաթիռներ և ուղղաթիռներ	13	-	-	-	13
Անօդաչու թռչող սարքեր	22	-	4	-	26
Բեռնատարներ, ամենագնացներ	40	22	6	8	76

Այս վիճակագրությունը ցույց է տալիս, որ տարածաշրջանում երկու հակամարտող կողմերի ռազմատեխնիկական հավասարակշռությունն էականորեն խախտված է, իսկ դա ընձեռում է առավել կարող կողմի քաղաքական կամքի ու ազգային շահերի իրացման ավելի լայն հնարավորություններ: Հենց դրանով են բացատրվում ադրբեջանական կողմի հավակնոտ ու ագրեսիվ քաղաքական հայտարարություններն ու մոտեցումները ինչպես տարածաշրջանային ձևաչափում, այնպես էլ մասնավորապես ՀՀ-ի նկատմամբ:

44-օրյա պատերազմը տեսանելի փոփոխություններ մտցրեց տարածաշրջանում ռազմաքաղաքական շփումների մեջ: Եթե նախկինում ռազմաքաղաքական հարաբերությունների տեսանկյունից տարածաշրջանի երեք երկրները անվտանգային իրենց օրակարգերը տեսնում էին անվտանգային երեք տարբեր համակարգերում, ապա պատերազմից հետո տարածաշրջանում էականորեն ավելացավ հատկապես ՌԴ-ի ազդեցությունը: Նոր որակի ծանրակշիռ դեր ստանձնեց նաև Թուրքիան, որի հարաբերությունները Ադրբեջանի հետ էապես խորացան՝ հասնելով արդեն ռազմաքաղաքական դաշնակցային ու խորը գործընկերային մակարդակի. դրա ամենից վառ դրսևորումը Շուշիի հռչակագիրն է, որտեղ հստակ որակում տրվեց թուրք-ադրբեջանական հարաբերություններին՝ անվանելով դրանք ռազմավարական-դաշնակցային[13]: Ավելի ուշ՝ արդեն 2022 թ. փետրվարի 21-ին, ստորագրվեց

[12] Տե՛ս նույն տեղը:

[13] Տե՛ս Опубликован полный текст Шушинской декларации, подписанной между Азербайджаном и Турцией, https://www.trend.az/azerbaijan/politics/3440708.html?fbclid=IwAR3lReRWajigORsNF9Dx-T9u9TRNzq7glS95f-2EeuwMc2tXXA2VJdjSleM, 16 июня 2021

ռուս-ադրբեջանական դաշնակցային փոխգործակցության հոչակագիրը, որը ռազմավարական որակի փաստաթուղթ է և արձանագրում է երկու երկրների հարաբերությունների խորությունը և փոխկարևորությունը անվտանգային նոր իրողությունների ներքո հնարավոր մարտահրավերների սպասելիս։

Նման իրողությունների համատեքստում ՀՀ-ում ռազմաքաղաքական գործընկերների հետ հարաբերությունները սկզբում անորոշության ու վերագնահատման փուլում էին, սակայն ռեալպոլիտիկի փիլիսոփայությունը եկավ սրբագրելու դրանք և հստակեցրեց ռազմաքաղաքական այն ուղեգիծը, որը հնարավորություն կտա ՀՀ-ի անվտանգության ապահովման օրակարգը կառուցելու կայուն ու կանխատեսելի՝ ռազմաքաղաքական ձևաչափում հայ-ռուսական հարաբերությունների ու ՀԱՊԿ-ի ներքո գործակցության խորացման առումով։

Վրաստանը ավանդաբար ունի արևմտյան արտաքին քաղաքական կողմնորոշում, որի վերջնանպատակը ԵՄ-ին անդամակցելն է և ՆԱՏՕ-ին դաշնակցելը։ Սակայն վերջին տարիների զարգացումները հաշվի առնելով՝ Վրաստանի ներկա իշխանությունները աչքի են ընկել ՌԴ-ի հետ առճակատումը մեղմելու ու գործակցելու ռազմավարությամբ։ Այդ միտումը է՛լ ավելի ընդգծվեց 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո, ինչպես նաև հատկապես ռուս-ուկրաինական ճգնաժամի ժամանակ ՌԴ-ի դեմ տնտեսական պատժամիջոցներին Վրաստանի չմիանալու որոշմամբ։

Ամփոփելով հարկ է նշել, որ 44-օրյա պատերազմը՝ որպես խախտված ուժային հավասարակշռության հետևանք, դարձավ Հվ. Կովկասում նոր ուժային պատկեր ձևավորելու ու քաղաքական օրակարգ հաստատելու կարևոր նախապայման։ Եթե նախկինում հստակ տեսանելի էր տարածաշրջանում դաշնակցային հարաբերությունների ուղեգծերը, ապա ներկայումս դրանք դեռևս ձևավորման, փոխակերպման ու խորացման փուլում են։ Անկարայի՝ Հվ. Կովկասում էապես աճած դերակատարումը նոր օրակարգ սահմանեց ինչպես տարածաշրջանի ներսում, այնպես էլ այնտեղ շահեր ու ամենամեծ ներգրավվածությունն ունեցող ՌԴ-ի համար։ Պարզ դարձավ, որ տարածաշրջանային որևէ ծրագիր, որը ուղղված պետք է լինի կայնության ու կանխատեսելիության ապահովմանը, առանց Անկարայի իրատեսական չէ. հենց այդ համատեքստում էլ կարելի է դիտարկել տարածաշրջանային գործակցության վերակենդանացած տարբեր առաջարկները, որոնցից այսօր նախահիրացման փուլում է «3+3» ձևաչափի գործակցությունը։ Արևմուտքի դերակատարման նվազեցումը և մյուս կողմից՝ արևմտյան որոշ երկրների հաղորդակցային ու էներգետիկ շահերի իրացման գործընթացները պայմաններ ստեղծեցին, որ այստեղ ուժային հարաբերակցության՝ դեռևս ձևավորվող պատկերը դառնա գլոբալ աշխարհակարգի հաստատման մակարդակներից մեկը՝ ներառելով ինչպես ան-

կայունության, այնպես էլ զարգացման հնարավորություններ։ Մի շարք պետությունների ու կառավարությունների՝ ՌԴ-ին տարածաշրջանից դուրս մղելու քայլերը ոչ միայն արդյունք չտվեցին, այլև հակառակ արդյունքը տվեցին. ՌԴ-ի՝ այդ թվում ռազմական ու ռազմատեխնիկական ներգրավվածությունը էականորեն ավելացավ. նա տարածաշրջանում տեղակայեց իր խաղաղապահներին, որոնք դարձան տարածաշրջանի կայունության ու անվտանգության կարևորագույն երաշխիք։

АЛЕН ГЕВОНДЯН – ***44-дневная Карабахская война и процесс трансформации геополитической роли Южного Кавказа.*** * – 44 дневная война в 2020 г. в значительной степени изменила геополитическую роль Южного Кавказа. Если раньше в регионе была определенная система равновесия сил, то после войны все изменилось, и новая система до сих пор не создана. В статье представлена и анализирована система факторов, которые определяют геополитическую роль Южного Кавказа и создают систему равновесия сил в нем. В частности, представлена система индикаторов региональных конфликтов, энергетическая и транспортная роль Южного Кавказа, принцип изменения политической власти в странах региона, внешнеполитический выбор доктрин этих стран, а так же трансформация роли РФ и Турции в региональных процессах.

Ключевые слова: *Южный Кавказ, 44-дневная война, система равновесия, геополитическая роль, РФ, Турция, НК*

ALEN GHEVONDYAN – ***The 44-Day War in Nagorno Karabakh and South Caucasus Geopolitical Role Transformation Processes.*** ** – 44-Day War in Nagorno Karabakh dramatically changed the geopolitical role of the South Caucasus Region. If previously there was some kind of delicate balance of power in the region, this War changed it. The new one has not been settled yet. The article analyzes and assesses the chain of factors which make an impact on the geopolitical role of the region and achievement of the regional balance. Particularly, we analyze the regional conflicts, the energetic-communication role of the South Caucasus, the methods of change of power and foreign policy doctrines of the regional states, as well as the changed roles of the Russian Federation and Turkey.

Key words: *South Caucasus, 44-Day War, balance of power, geopolitical role, Russian Federation, Turkey, Nagorno Karabakh*

* Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке МОНКС РА в рамках научного проекта № 21T-5F218.

** The work was supported by the Science Committee of MESCS RA, in the frames of the research project № 21T-5F218.